

Ճշմարիտ երկրպագության կողմը կանգնիր — Մաս 2

Հիմնված է «Ի՞նչ է սովորեցնում Աստվածաշունչը իրականում» գրքի 16-րդ գլխի վրա: Առկա է jw.org կայքում:

ՆՊԱՏԱԿԸ: Ինքնաքննություն անել և հասկանալ, թե որոնք են քո համոզմունքները, և ինչու ես դրանց հավատում: Քննել, թե ինչ է սովորեցնում Աստվածաշունչը, և տեսնել, թե ինչպես կարող ես քո համոզմունքները բացատրել ուրիշներին:



ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՊԵ՛ՏՔ Է ԱՐԴՅՈՔ ԻՐԵՆՑ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԵՆ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

1 ՈՐՆ Է ՔՈ ՀԱՄՈՋՄՈՒՆՔԸ

Ինչո՞ւ ոմանք գուցե ասեն՝ այո՛:

Ինչո՞ւ ոմանք գուցե ասեն՝ ո՛չ:

Իսկ դո՞ւ ինչ կասես:

Ինչո՞ւ ես դրան հավատում:

2

ԻՆՁ Է ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՁԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ


ՃՁմարիտ քրիստոնյաները խուսափում են կրոնական հավատալիքների շուրջ վիճաբանելուց: (Տես «Աստվածաշունչը սովորեցնում է» գրքի 16-րդ գլխի 13-17-րդ պարբերությունները)

Կարդա Կողոսացիներ 4:6

Այս համարն ինչպե՞ս է ցույց տալիս, որ մեր հավատալիքների մասին խոսելիս պետք է նրբանկատ լինենք:

Կարդա Մատթեոս 7:12

Եթե նույնիսկ ուրիշները համաձայն չեն մեր հավատալիքներին, ինչո՞ւ պետք է շարունակենք հարգալից վերաբերմունք դրսևորել նրանց նկատմամբ:



Խաղալիս այնպես ես նետում գնդակը, որ այն բռնելը հեշտ լինի: Նմանապես մեր համոզմունքները մենք պետք է նրբանկատորեն բացատրենք, որ ուրիշները կարողանան հասկանալ մեր տեսակետը

Ճճմարիտ քրիստոնյաները միասին հավաքվում են և սովորում, թե ինչպես պետք է իրենց հավատալիքների մասին խոսեն նրանց հետ, ովքեր ավելին են ուզում իմանալ:

(Տես «Աստվածաշունչը սովորեցնում է» գրքի 16-րդ գլխի 18-րդ և 19-րդ պարբերությունները)

Կարդա Սաղմոս 22:22; Հռոմեացիներ 1:12 և Եբրայեցիներ 10:24, 25

Ի՞նչ օգուտներ ենք ստանում հավատակիցների հետ երկրպագության համար հավաքվելիս:

Կարդա Մաղաքիա 3:10

Ի՞նչ կլինի, եթե կանգնենք ճճմարիտ երկրպագության կողմը:

Ո՞րն է կարող ես *դու* պատմել քո հավատալիքների մասին և ինչպե՞ս կարող ես նրբանկատորեն անել դա:

3

ԲԱՅԱՏՐԻ ՔՈ ՀԱՄՈՋՄՈՒՆՔՆԵՐԸ

ԵԹԵ ԱՍԵՆ...

Եհովայի վկաները միշտ փորձում են իրենց հավատալիքները պարտադրել ուրիշներին:

ԿԱՐՈՂ ԵՍ ԱՍԵԼ...

Մենք ուրախությամբ մեր հավատալիքների մասին պատմում ենք նրանց, ովքեր ցանկանում են իմանալ դրանք: Բայց երբեք որևէ մեկի վրա ճնշում չենք բանեցնում, որ փոխի իր հավատալիքները, քանի որ...

Աստվածաշնչից ո՞ր համարը կկարդաս նրա համար:

Ի մտի ունենալով նրա տեսակետը՝ ինչպե՞ս կբացատրես այդ համարը:

ԵԹԵ ԱՍԵՆ...

Կրոնը անձնական հարց է, պետք չէ այն քննարկել ուրիշների հետ:

ԿԱՐՈՂ ԵՍ ԱՍԵԼ...

Այսօր դա տարածված տեսակետ է: Բայց Աստվածաշունչը խրախուսում է մեզ խոսել մեր հավատալիքների մասին, քանի որ...

Աստվածաշնչից ո՞ր համարը կկարդաս նրա համար:

Ի մտի ունենալով նրա տեսակետը՝ ինչպե՞ս կբացատրես այդ համարը:
